ՀԱՆԴԻՊԵՔ ՊԱՆՅԱՅԻՆ



# Հիսուսի հետևորդները Թաիլանդում

## Ինչպե՞ս է Պանյան հետևում Հիսուսին

Պանյան հրավիրում է իր մորաքրոջ տղային՝ եկեղեցի գնալ իր հետ: Երբ նա գալիս է, Պանյան օգնում է նրան իրեն ընդունված զգալ: Նա օգնում է եղբորը հանդիպել Երեխաների միության մյուս երեխաների հետ և ընկերանալ:

Տանը Պանյան լվանում է նրա նախաճաշի ամանը և սրբում նրա կոշիկները: «Ես ուրախ եմ լինում, երբ օգնում եմ»,- ասում է Պանյան: Նա ապրում է մորաքրոջ և տատիկի հետ, և սիրում է օգնել նրանց: Նա նաև ամեն առավոտ ծալում է իր վերմակը:

Պանյայի մայրը վերջերս է մահացել: Երբ Պանյան կարոտում է մորը, մորաքույրն օգնում է նրան աղոթել Երկնային Հորը: Նա իրեն սիրված է զգում աղոթելուց հետո: «Երբ ես աղոթում եմ, զգում եմ, որ Հիսուսն ինձ հետ է», - ասում է նա:



Պանյան՝ տատիկի և մորաքրոջ հետ:

### Դուք նույնպես կարող եք հետևել Հիսուսին:

Նշեք որևէ բան, որ դուք արել եք՝ Հիսուսին հետևելու համար: Գրեք և պատմեք մեզ: Դարձերեսի շապիկին կարող եք տեսնել, թե ինչպես դա անել:




## Պանյայի մասին

**ՏԱՐԻՔԸ.** 7

**ԵՐԿԻՐԸ.** Նոնթաբուրի (Թաիլանդ)

**ԼԵԶՈՒՆ.** Թաիլանդերեն

**ՆՊԱՏԱԿԸ.** Դառնալ ինտերիերի դիզայներ և զարդարել տների ու շենքերի սենյակները

**ՆԱԽԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.** Պարել, հեծանիվ վարել, սովորել դաշնամուր նվագել, լողալ, կարդալ և զբաղվել թեքվոնդոյով

**ԸՆՏԱՆԻՔ.** Պանյա, մորաքույր և տատիկ

## Ի՞նչ է սիրում Պանյան

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԻՍՈՒՍԻ ՄԱՍԻՆ.** Երբ Նա մկրտվեց (տես Մատթեոս 3.13-17)

**ՏՈՆԱԿԱՆ ԿԱՄ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹ.** Սուրբ Ծնունդը և ճամփորդություն ընտանիքով

**ՄԻՐԳ ԵՎ ԲԱՆՋԱՐԵՂԵՆ.** Կանաչ խաղող և վարունգ

**ԳՈՒՅՆԸ.** Մանուշակագույն

**ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԳ.** «Կուզեմ տեսնել տաճարը», (Երեխաների երգարան, 99):